Վիճակի երգ - Շիրակի մարզի տարբերակ

1. Համբարձում է, գարուն է,
Ջա՛ն, ծաղիկ, ջա՛ն, ջա՛ն,
Մեր վիճակը սիրուն է,
Ջա՛ն, վիճակ, ջա՛ն, ջա՛ն:

2. Էս գիշեր լուսը տեսա,
Ջա՛ն, ծաղիկ, ջա՛ն, ջա՛ն,
Իմ յարը դուսը տեսա:
Ջա՛ն, վիճակ, ջա՛ն, ջա՛ն:

3. Կայնել ես վարդի հովին,
Ջա՛ն, ծաղիկ, ջա՛ն, ջա՛ն,
Քամին տա ծոցիդ մովին:
Ջա՛ն, վիճակ, ջա՛ն, ջա՛ն:

4. Ամեն քեզի տեսնելիս,
Ջա՛ն, ծաղիկ, ջա՛ն, ջա՛ն,
Համ՝ Համբարձում, համ՝ Զատիկ:
Ջա՛ն, վիճակ, ջա՛ն, ջա՛ն:

5. Աստված կյանք տա ամենքին,
Ջա՛ն, ծաղիկ, ջա՛ն, ջա՛ն,
Ուրախ կլնի էս տարին:
Ջա՛ն, վիճակ, ջա՛ն, ջա՛ն:

6. Մանի ասեմ ու շարեմ,
Ջա՛ն, ծաղիկ, ջա՛ն, ջա՛ն,
Լցնեմ տոպրակն ու կարեմ:
Ջա՛ն, վիճակ, ջա՛ն, ջա՛ն: